թարմ դալարով:

Հազիւ էինք դուրս եկել անտառից, որ յանկարծ երեւացին կղմինդրէ կտուրները:

Հասել էինք Մօգի:

Դա մի ձկնորսական գիւղ է, որ քմահաճ անփթութեամբ փռւել է ծովի ափին:

Ճապոնում գիւղը ընդհանրապէս շատ քչով է տարբերւում քաղաքից. նոյն փայտէ շէնքերը, նոյն կղմինդրէ կտուրներով եւ նոյն մաքրութիւնը ամեն տեղ:

Գրեթէ բոլոր պատերից կախած էին ուռկաններ, իսկ հեռւում՝ ծովում օրօրւում ու սպիտակին էին տալիս ձկնորսների մակոյկները:

Ճապոնացի ձկնորսը խիստ յայտնի է իր անվեհերութեամբ: Նրանք թեթեւ, խարխուլ նաւակներով գնում են շարունակ հեռո՛ւ, հեռո՛ւ բաց ովկիանոսը, թէեւ շատերն էլ զոհ են դառնում սարսափելի տալֆունեն քամուն:

Յանկարծ լսւեց շոգենաւի սոյլը, եւ մենք ուրախ շտապեցինք դէպի ծով:

Ծովի տեղատուութեան ժամանակն էր: Շոգենաւը, ի հարկէ, կանգնած էր հեռուն. նաւակն անգամ չէր կարողանում մօտենալ, այնքան ծանծաղ էր ափը: Եւ շոգենաւը հասնելու համար ստիպւած էինք դիմելու ամենանահապետական միջոցին: Տղամարդկանց գիւղացիք տանում էին իրանց ուսերին, իսկ կանանցս համար երկու-երկու ճապոնացի իրանց ձեռքերը միացնելով, նստարան էին հիւսում: Նստողը ամուր բռնւում էր իր երկու բեռնակիրների վզից ու սուր քրքիջով աշխատում էր ծածկել իր վախը: Ծիծաղելի էին նոյնպէս եւ պարոնները այդ կարճլիկ ուժեղ ճապոնացիների ուսին: